ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.09.2012թ.

ք.Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 95 -ը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ա. Բարսեղյանը,Արարատի մարզային դատախազի տեղակալ Ա.Հակոբյանը և դատախազ Վ.Պողոսյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, առողջապահական հիմնարկների տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ.

1. Մոր և մանկան առողջության պահպանման մասին:
դատախազության միջնորդագրի վերաբերյալ հաղորդում:

/ Զեկ՝. Առող. և սոց. պաշտպանության վարչության պետ Գ. Ավետիսյան/

2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին: */Զեկ՝. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ. Պողոսյան/*

3. Մարզի համայնքների 2012թ. ութ ամսվա բյուջեների կատարման մասին:

/Զեկ՝. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյան/

4. Բերքահավաքի և մթերումների վիճակի մասին:

/Զեկ՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ. Վիրաբյան/

5. Այլ հարցեր՝

1.Արարատի մարզի դատախազության միջնորդագրերի քննարկում:

1. Լսեցին՝

Մոր և մանկան առողջության պահպանման մասին առողջապահության և սոցպաշտպանության վարչության պետ Գ. Ավետիսյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

2.Լսեցին

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքներ պաշտպանության բաժնի պետ Գ.Պողոսյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց համայնքների ղեկավարներին՝
այսուհետ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելիս առաջնորդվել ՀՀ ընտանեկան և քաղաքացիական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ:

3. Լսեցին

Բերքահավաքի և մթերումների վիճակի մասին: գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Տ.Վիրաբյանի զեկուցումը: /կցվում է/

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

4. Լսեցին

Մարզի համայնքների 2012թ. ութ ամսվա բյուջեների կատարման մասին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ.Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց մարզպետի տեղակալ Ա.Մուրադյանին, ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Գ.Եղիազարյանին՝

15-օրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել այն համայնքների մասին, որոնք չեն կատարել սեփական եկամուտների գծով մուտքերի հավաքագրումը:

5. Այլ հարցեր՝

Արարատի մարզի դատախազության միջնորդագրերի քննարկում:

5/1. Արարատի մարզային դատախազի տեղակալ Ա.Հակոբյանը հորդորեց կրթության և առողջապահության համակարգի ներկայացուցիչներին՝ խիստ ուշադրություն դարձնել դեռահասների նկատմամբ բռնի սեռական գործողությունները և վաղ ամուսնությունները բացառելու նպատակով:Նման փաստերի առկայության դեպքում՝ հաղորդագրություն ներկայացնել իրավապահ մարմիններին:

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Հակոբյանին՝
համապատասխան շրջաբերական ուղարկել դպրոցների տնօրեններին:

5/2. Խարդախության միջոցով հափշտակության դեպքերի վերաբերյալ միջնորդագրի քննարկմամբ հանդես եկավ դատախազ Վ.Պողոսյանը:

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց համայնքների ղեկավարներին՝

տեղերում պարբերաբար իրականացնել իրավախորհրդատվական և բացատրական աշխատանքներ ,յուրաքանչյուր կոնկրետ դեպքով ցուցաբերել հետևողականություն՝ հնարավոր իրավախախտումները կանխելու նպատակով, անհրաժեշտության դեպքում՝ խորհրդակցել ոստիկանության կամ դատախազության աշխատակիցների հետ:

5/3. ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանը ներկայացրեց համայնքների զորահավաքային պլանը:

Արտահայտվեց մարզպետ Է. Բարսեղյանը:

Հանձնարարվեց՝

- ՏԻ և ՀՊՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանին՝
մեթոդական օգնություն ցուցաբերել համայնքների ղեկավարներին պլանների կազմման հարցում:
- Համայնքների ղեկավարներին՝
մեկամսյա ժամկետում կազմել, հաստատել զորահավաքային պլանները և ներկայացնել մարզպետարան:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Է. Բարսեղյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ